ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եկեղեցի և ընտանեկան արժեքներ

(քննարկման նյութեր)

Սբ Էջմիածին 2013

Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Եկեղեցի և ընտանեկան արժեքներ» թեմայով քննարկման (6 դեկտեմբերի 2013 թ., Սբ Էջմիածին) նյութերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան …….….. 5
Զեկույց Ա – Քրիստոնեական ընտանիք ……..… 7
Զեկույց Բ – Եկեղեցի և ընտանեկան արժեքներ ……. ..20
Ամփոփում……..... 31

ՆԱԽԱԲԱՆ

2013 թ. դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Եկեղեցի և ընտանեկան արժեքներ» թեմայով քննարկում:

Եկեղեցին հոգևոր արժեքների շտեմարան է, ուր իր կարևոր տեղն ունի քրիստոնեական ընտանիքը՝ իբրև այդ արժեքների կենդանի պահապան ու փոխանցող: Եկեղեցին ապրում և զարգանում է իր անդամների մեջ, և ամեն մի ընտանիք փոքրիկ եկեղեցի է, որն իր աճումն է ստանում այն աճումով, որ Աստծուց է (Կող. 2:19):

Ընտանիքը աստվածադիր կառույց է, եւ այս առումով՝ ընտանեկան արժեքներն ամենից վեհ գանձերն են, որոնք աստվածային կարգադրությամբ ի պահ են դրված Եկեղեցում:

Ցավոք, մեր ժամանակներում խարխլվում են ավանդական ընտանիքի մասին մեր պատկերացումները, եւ մենք ականատեսն ենք լինում այնպիսի ցավալի երևույթների, ինչպիսիք են ամուսնալուծությունների աճը, ընտանեկան անհավատարմությունը, որդեծնության մասին աղավաղված ընկալումները:

Բոլոր այս հոռի երևույթների դեմ պայքարում իր ուրույն տեղը պետք է ունենա նաև Եկեղեցին, քանզի այն հարստացնում է մարդկային բարքերը, լուսավորում մարդկային բանականությունը, սովորեցնում սիրել մերձավորին:

Կլոր Սեղան հիմնադրամի եւ Տեղեկատվական համակարգի նախաձեռնությամբ կազմակերպված «Եկեղեցին և ընտանեկան արժեքները» քննարկումը նպատակ ունի գտնել այն ուղիները, որոնք կնպաստեն ամուր և առողջ պահելու քրիստոնեական ընտանիքի հիմերը, որովհետև այս ամրությամբ է երաշխավորված նաև մեր հասարակության ամրությունը։

Վահրամ քահանա Մելիքյան

ԶԵԿՈՒՅՑ Ա

Տ. Մարկոս քահանա Մանգասարյան
Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

(սկզբնավորում, արժեքներ, մարտահրավերներ)

«Ի՞նչ է Սուրբ Ընտանիքը այն մարդու համար, ով երբեք ականատես չի եղել ավանդական ընտանիքին: Ինչպե՞ս մենք կհասկանանք Մանուկ Հիսուսի հրաշքը, եթե երեխայի ծնունդը ավելի բեռ է համարվում, քան՝ օրհնություն հույսի: Ո՞րն է «Հայր մեր» աղոթքի իմաստը հասարակության մեջ, որտեղ հայրությունն արժեզրկվում է»[1]:

Քրիստոնեական ընտանիքի նախապատմությանը մենք ծանոթանում ենք Հին Կտակարանից՝ Ծննդոց գրքի առաջին երկու գլուխներից: Հին Կտակարանում հանդիպող որևէ երևույթ կամ գաղափար, հասկանալի պատճառով, քրիստոնեական չի կարող անվանվել, սակայն, այսուամենայնիվ, քրիստոնյաների համար Հին Կտակարանը ևս Աստվածաշունչ է և անբաժանելի մասն է ողջ Սուրբ Գրքի: Հին Կտակարանն իր մեջ պարունակում է ոչ միայն Նոր Կտակարանում Քրիստոսի միջոցով իրականացող բազում մարգարե-ություններ, այլև համամարդկային բարոյական և հոգևոր բարձր արժեքներ: Ի վերջո՝ Քրիստոս ինքն էլ,

[1] Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքի ժամանակ հղած պատգամից:

չմերժելով Հին Ուխտը, բազում մեջբերումներ է կատարում Հին Կտակարանից, որոնցից մեկն էլ կնոջն արձակելու՝ ամուսնալուծության մասին վեճի ժամանակ (Մատթ. 19.4-6): Հետևաբար մեզ համար ևս ընդունելի է, որ քրիստոնեական ընտանիքի պատմությունն իր սկզբնավորումն առնում է հենց Ծննդոց գրքից՝ Ադամի և Եվայի արարման պատմությունից:

Ընտանիքի արժեքն ու կարևորությունը հասկանալու համար, սակայն, կարևոր է նախ և առաջ հասկանալ ընտանիք կազմող մարդու արժեքը, այդ մարդու կոչումը: Արարչագործության ընթացքում բոլոր արարածներից միայն մարդուն ստեղծելու ժամանակ է, որ Աստված ասում է. **«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ...»: Եւ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց»** (Ծնն. 1.26-27):

Մարդն ստեղծվեց Տիրոջ կերպարով և նմանությամբ: Հայրերից շատերը փորձում են առանձնացնել «պատկեր» և «նմանություն» եզրերը, «պատկերի» տակ առաջին հերթին հասկանալով մարդու ազատ կամք ունենալը, նրա հոգու անմահ լինելը, ստեղծագործելու կարողությունը, բանականությունը և այլն, իսկ «նմանություն» ասելով՝ առաքինի և բարի վարքով Տիրոջը նմանվելու կարողությունը, որքանով որ այն հնարավոր է մարդու համար:

Ընդհանրական Եկեղեցու հայրերից Սուրբ Աթանաս Մեծն ասում է. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: Եվ մարդու աստվածացման ճանապարհին կարևոր տեղ պիտի ունենար աստվածաստեղծ ընտանիքը: Նախքան մարդը կհասցներ մեղանչել և արտաքսվել երանավետ դրախտից, Աստված հաստա-

տեց Ադամի ու Եվայի միությունը՝ մարդկային առաջին ընտանիքը, ասելով՝ «**Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»** (Ծննդ. 1.28):

Այսպիսով՝ Աստված մարդկանց տալիս է «որդեծնության» պատվիրանը, որով մարդուն ընձեռնվում է իր ստեղծագործ և արարչագործ էությամբ Տիրոջը նմանվելու, թերևս, ամենակարևոր հնարավորություններից մեկը: Սերնդագործությամբ, իր նմանին արարելով՝ մարդն իր աստվածանմանությունն է հաստատում: Ահա թե ինչու քրիստոնեական ընտանիքների համար ամենաէական հիմնարժեքներից մեկը և աստվածահաստատ առաքելությունը պիտի լինի որդեծնությունը: Որդեծնություն, որը սակայն, զուտ մարդկային ցեղը նոր անհատներով շատացնելու նպատակը չպիտի ունենա, այլ միտված պետք է լինի կատարելության կամ աստվածանմանության ավելի բարձր աստիճանի վրա կանգնած սերնդի արարման:

Կարևոր է նաև ընդգծել, որ երկրին տիրելու և բոլոր կենդանիներին իշխելու իրավունքը Աստված տալիս է տղամարդուն և կնոջը հավասարապես, ինչն էլ քրիստոնեական ընտանիքի կառույցում հիմք է հանդիսանում կնոջ և տղամարդու իրավահավասարության:

Հետաքրքիր է նկատել, որ Ծննդոց գրքում արարչագործության 5 օրերի ընթացքում ամեն օրվա արարչագործության ավարտին ասվում է. «Աստված տեսավ, որ լավ է», իսկ վեցերորդ օրը՝ Ադամի արարումից հետո, մենք մեկ այլ խոսք ենք լսում. **«Տեր Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա**

նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծննդ. 2.18): Այստեղից էլ հենց հասկանալի է դառնում, որ տղամարդն ու կինն ամուսնությամբ փոխադարձաբար լրացնում են միմյանց, ինչը երբևէ հնարավոր չպիտի լինի միասեռ ամուսնությունների դեպքում:

Ծննդոց գրքի երկրորդ գլխի վերջում մենք հանդիպում ենք տղամարդու և կնոջ միության՝ ամուսնության կամ պսակի աստվածաբանական ամենակարևոր հիմնադրույթներից մեկին. Սուրբ մարգարեն[2] ասում է. **«Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, եւ երկուսը պետք է լինեն մի մարմին»** (Ծննդ. 2.24):

Պսակի կամ Սուրբ ամուսնության միջոցով տղամարդն ու կինը դառնում են մեկ: Եվ այդ միությունն իրականություն է դառնում ինչպես մարմնական, այնպես և հոգևոր կյանքում: Երբ Քրիստոսին հարցնում են կնոջն արձակելու հրեական սովորության մասին, Քրիստոս հենց այս մեջբերումն է անում՝ հավելելով. **«Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»** (Մատթ. 19.6): Քրիստոսի պատասխանով շեշտվում է Աստծո կողմից օրհնված Սուրբ Պսակի անբաժանելիության գաղափարը[3]:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք ընտանիքի մասին Ծննդոց գրքի առաջին երկու գլուխներում արտահայտված հիմնադրույթները, կստանանք հետևյալը պատկերը.

---

[2] Ավանդության համաձայն՝ Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը՝ Հնգամատյանը, գրվել է Մովսես մարգարեի կողմից:

[3] Եկեղեցին որոշակի պայմաններում ստիպված է լինում թույլատրել ինչպես ամուսնալուծությունը, այնպես էլ՝ երկրորդ, հազվադեպ անգամ նաև երրորդ պսակը:

1. ընտանիքն աստվածահաստատ կառույց է (Ծննդ. 1.27),

2. ընտանիքի հիմք հանդիսացող ամուսնական կապը թույլատրելի է բացառապես տղամարդու և կնոջ միությունով (Ծննդ. 2.24),

3. ամուսնության մեջ և ընտանիքում տղամարդն ու կինը փոխադարձաբար լրացնում են միմյանց (Ծննդ. 2.18),

4. ընտանիքի կարևորագույն գործառույթներից մեկը որդեծնությունն է (Ծննդ. 1.28),

5. ընտանիքի ներսում տղամարդն ու կինը իրավահավասար են (Ծննդ. 1.28):

Ճիշտ է, Հին Կտակարանում, Օրենքի[4] և հատկապես Իմաստության գրքերում ընտանեկան արժեքների մասին բավական շատ հատվածներ կան, սակայն ընդհանուր առմամբ, Հին Ուխտում ամուսնության և ընտանիքի կարևորությունը գերազանցապես սերնդագործության՝ որդեծնության մեջ էր: Այս է պատճառը, թերևս, որ զավակ չունեցող ամուսնական բոլոր զույգերին հրեաները նայում էին իբրև Աստծո կողմից մեղքի պատճառով պատժվող անձանց: Սերնդի շարունակականությունը ամենաակնհայտ և պարտադիր պայմանն էր Տիրոջ օրհնությունն ունենալու համար (հիշենք Աբրահամի խոնարհության դիմաց Աստծո կողմից տրված օրհնություն-խոստումը նրա սերունդը շատացնելու վերաբերյալ (Ծննդ. 22.17-18): Այս դիրքորոշումը ցույց է տալիս, որ հրեականության մեջ վաղ շրջանում բացակայում էր հստակ պատկերացումը

[4] Օրինակ՝ «մի՛ շնացիր», «պատվիր քո հորն ու մորը» (Ելք 20.12,14) և այլն:

հետմահու կյանքի գոյության մասին: Հավիտենական կյանքը հնարավոր էր միայն սերնդի շարունակականության մեջ: Այստեղից էլ ծագում էր հրեական ընտանիքներում առկա «կոնկուբինատի»[5] (Ծնն. 16.1-3) և «լեվիրատի»[6] (Ծնն. 38.8) ինստիտուտը[7]:

Նոր Կտակարանի հունարեն բնագրում «ընտանիք» բառին որպես համարժեք ունենք երկու բառ՝ առաջինը «patria»-ն, որը խոսում է հրեական ընտանիքի՝ հայրիշխանական տիպին պատկանելու մասին և երկրորդը՝ «oikos», որ նշանակում է «տուն»: Բնավ պատահական չէ, որ Եկեղեցու հայրերն ասում են. «Ընտանիքը մանրակերտն է Եկեղեցու»: Չէ՞ որ առաջին դարում տեղական եկեղեցիները կազմակերպվում էին նորադարձ քրիստոնյաների տներում: Եվ փաստացիորեն տները հենց առաջին քրիստոնյաների եկեղեցական կառույցներն էին՝ «առտնին եկեղեցիները», որոնց

---

[5] Լատ. concubina – con (միասին) և cubare (պառկել) բառերից: Հրեական միջավայրում «կոնկուբինատ»-ը ընտանեկան կյանքում ընդունված այն սովորությունն էր, համաձայն որի տանտիկնոջ անպտղության դեպքում տանտիրոջ հետ պառկում էր ավելի ցածր դասի ներկայացուցիչ որևէ կին (սովորաբար տան աղախիններից): Այս կապից ծնված զավակը հայրական տան ունեցվածքից բաժին չուներ:

[6] Լատ. levir (տագր): Սովորույթ հրեական ընտանեկան կյանքից: Երբ եղբայրներից մեկն անժառանգ մահանում էր, մյուս եղբայրը պարտավորվում էր կնության առնել եղբոր այրուն և զավակ պարգևել մահացած եղբորը: Այս կապից ծնված զավակը համարվում է հանգուցյալ եղբոր երեխան: Սրանով հրեաները փորձում էին իրենց եղբոր կյանքի հարատևությունն ապահովել սերնդի շարունակականության մեջ:

[7] Протоиерей Иоанн Мейендорф, “Брак в Православии”. Клин 2004. С. 7.

մասին տեղեկություններ ունենք Գործք Առաքելոցից և Պողոս Առաքյալի նամակներից:

Նոր Կտակարանում Քրիստոսի և առաքյալների կողմից ամուսնությունն ու ընտանիքը ներկայացվում են նորովի և փոքր-ինչ տարբերվում են Հին Կտակարանից: Ամուսնությունը ոչ միայն չմերժվեց Տեր Հիսուս Քրիստոսի կողմից, այլ Տերն ինքը մասնակցեց Կանայի հարսանիքին (Հովհ. 3) և, անսալով Սուրբ Մարիամ Աստվածածնի խոսքին, ջուրը խորհրդականորեն գինու վերածեց: Հովհաննեսի Ավետարանում զետեղված առաջին այս հրաշքի մեջ Եկեղեցու հայրերը տեսնում են Սուրբ Պսակի խորհրդի հաստատումը, որն իր արձագանքն է գտել նաև Սուրբ Պսակի խորհրդակատարության մեջ. Սուրբ Պսակը բոլոր ճշմարիտ Եկեղեցիների կողմից ընկալվում է որպես խորհուրդ[8]: Այս է ամենազորավոր պատճառը, որ Քրիստոս կտրականապես դեմ է արտահայտվում ամուսնալուծությանը կամ կնոջը ազատ արձակելու հրեական սովորությանը, և առաջին հերթին հենց այս տեսակետն է, որ հիմնավորապես տարբերվում է Հին Կտակարանում արտահայտվածից:

---

[8] «Պսակը Եկեղեցու այն ս. խորհուրդն է, որով երկու հեռավոր անձնավորություններ՝ այր ու կին, ստանում են աստվածային օրհնություն, խորհրդավորապես միանում են իրար հետ, մի մարմին են դառնում և, մշտական կենակցության ուխտի մեջ մտնելով, ըստ Քրիստոսի և յուր Եկեղեցու միության օրինակին, նվիրվում են միասին Աստուծո արքայության հառաջադիմության համար աշխատելուն և նորա բաղկացուցիչ ընտանիքը կազմելուն», Արշակ Տեր-Միքելյան, «Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը», Սբ. Էջմիածին, 2007թ., էջ 458:

Երբ փարիսեցիները Քրիստոսին փորձելու համար նրան հարցրեցին, թե **«Օրինավո՞ր է, որ մեկն իր կնոջը արձակի ամեն մի հանցանքի պատճառով»** (Մատթ. 19.3), ժխտական պատասխան ստացան, որը հիմնավորվում էր Ծննդոց 2.24 համարով. **«…դրա համար տղամարդը պիտի թողնի հորը եւ մորը ու պիտի գնա իր կնոջ հետեւից, եւ երկուսը մեկ մարմին պիտի լինեն։ Ապա ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին են։ Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»** (Մատթ. 19.5-6)։ Մինչդեռ հրեաները հենվում էին հինկտակարանյան մեկ այլ հատվածի՝ Բ Օր. 24.1 համարի վրա, որտեղ նույն Մովսես մարգարեի կողմից ասվում էր. **«Եթե մեկը կին է առնում ու մերձենում նրան, բայց այնպես է պատահում, որ, նրա մեջ անարգության հանգամանք նկատելով, դադարում է նրան սիրելուց, ապա ապահարզանի թուղթ թող գրի, տա նրա ձեռքը եւ նրան արձակի իր տնից»**[9]: Սակայն Քրիստոսի պատասխանից պարզ է դառնում, որ Մովսեսն այս պատվիրանը տվել էր հրեաների խստասրտության պատճառով[10],

---

[9] Հրեական միջավայրում գոյություն ունի այս համարի մեկնության երկու հայտնի տարբերակ։ Առաջինը Շամմայի դպրոցի տարբերակն է, համաձայն որի, այս հատվածի մեջ խոսքը բացառապես «շնության» մասին է, ինչը և Քրիստոսի խոսքից է պարզ դառնում։ Երկրորդը՝ Հիլլելի դպրոցի կարծիքն է, ըստ որի հրեա տղամարդն իր կնոջից կարող էր բաժանվել նույնիսկ ամենաչնչին խնդրի պատճառով, օրինակ, եթե նրան դուր չգար կնոջ եփած կերակուրը (Collins, R. F. (1996). Marriage: New Testament. In D. N. Freedman (Ed.), The Anchor Yale Bible Dictionary (D. N. Freedman, Ed.) (4:570). New York: Doubleday. P. 570):

[10] Կնոջն արձակող տղամարդը պարտավոր էր արձակման թուղթ տալու։ Մովսես մարգարեն այս կերպ փորձում էր գոնե փոքր-ինչ կանոնակարգել ամուսնալուծությունների ընթացքը՝ ինչ-որ կերպ նաև դժվարեցնելով այն։

այնինչ **«… սկզբից այդպես չի եղել»** (Մատթ. 19.9): Նույնկերպ նաև այսօր Եկեղեցին, որոշ պատճառներից ելնելով, թույլ է տալիս երկրորդ, անգամ երրորդ պսակ կատարել՝ համարելով, որ առաջին ամուսնության կապն այլևս խզված է: Այդպիսի դեպքերից կարող են լինել ամուսիններից մեկի 7 տարի անընդմեջ բացակայությունը, մահացու հիվանդությունը, անպտղությունը, դավաճանությունը և այլն:

Հետաքրքիր է, որ ամբողջ Ավետարանում և Նոր Կտակարանում, մենք չենք տեսնում որդեծնության մասին շեշտված և ոչ մի խոսք: Սակայն պատճառը ոչ թե որդեծնության երևույթի թերագնահատումը կամ ստորադասումն է, այլ ամուսնությամբ տղամարդու և կնոջ միության առավել կարևորումը, ինչի պակասն ունեին Քրիստոսի ժամանակվա հրեաները: Չնայած որդեծնության մասին անուղղակի խոսք կա Ավետարանի մեկ այլ հատվածում, որտեղ Քրիստոսին փորձելու համար այս անգամ արդեն սադուկեցիներն են մոտենում, ովքեր չէին հավատում հարությանը: Սադուկեցիների հարցն առնչվում էր լեվիրատին (Մատթ. 22.23-33): Ըստ էության իրենց հետաքրքրողը ոչ թե լեվիրատի թույլատրելիությունը կամ որդեծնության գաղափարն էր, այլ հետմահու կյանքի, հարության իրական լինելն էր, որովհետև եթե կար հետմահու կյանք, ապա իրենց համար անհասկանալի էր, թե ում կինը պիտի լիներ յոթ եղբայրների հետ լեվիրատի սկզբունքով ամուսնացած կինը: Քրիստոսի պատասխանը ևս ուղղված չէ ո՛չ լեվիրտաի մերժման կամ ընդունման, ո՛չ էլ որդեծնության հետ կապված որևէ այլ հարցի: Քրիստոս ընդամենը բացատրում էր սադուկե-

ցիներին, որ հետմահու կյանքում չի լինելու կին-տղամարդ հարաբերություն. **«Որովհետեւ հարության ժամանակ ո՛չ կին են առնում եւ ո՛չ էլ մարդու գնում, այլ կլինեն՝ ինչպես հրեշտակները երկնքում»** (Մատթ. 22.30):

Հետաքրքրական են նաև Պողոս Առաքյալի Եփեսացիներին ուղղված թղթում արտահայտած տեսակետները ամուսինների փոխհարաբերություն-ների վերաբերյալ (Եփես. 5.21-6.9): Առաքյալը պատվի-րում է. **«Եւ ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես եւ կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում»** (Եփես. 5.24):

Անշուշտ, այսօրվա ընթերցողի համար փոքր-ինչ խորթ կարող է թվալ այսպիսի հայտարարությունը, որովհետև մեր ժամանակներում ամենուր խոսվում է տղամարդու և կնոջ իրավահավասարության, կանանց իրավունքների ոտնահարման, բռնությունների և այլնի մասին, իսկ այս միտքը կարծես թե հակառակ է այսօրվա արժեքներին: Սակայն սա միայն արտաքին՝ մակերեսային ընթերցումի հետևանք կարող է լինել: Իրականում ամեն բան հստակ է դառնում, երբ կարդում ենք Առաքյալի՝ տղամարդկանց ուղղված հորդորը. **«Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար»** (Եփես. 5.25):

Ուրեմն հստակ է դառնում, որ եթե տղամարդիկ ուզում են, որ կանայք հնազանդ լինեն իրենց ամեն ինչում, ուրեմն իրենք՝ տղամարդիկ, պիտի սիրեն կանանց այնպիսի սիրով, որ մինչև իսկ իրենց կյանքը պատրաստ կլինեն տալու հանուն այդ սիրո:

Քրիստոնեական ընտանիքի կառույցն ամուր պահելու համար անհրաժեշտ է հետևել Սուրբ գրքի խորհուրդներին ու պատգամներին: Եթե ուշադիր քննենք այսօրվա մեր հասարակության մեջ եղած ընտանեկան խնդիրները, ապա պիտի տեսնենք, որ դրանք ծնվում են աստվածաշնչյան պատգամներից հեռանալու հետևանքով: Առանձնացնենք ընտանեկան ամենակարևոր խնդիրներից մի քանիսը՝

ա. ամուսնալուծություն

բ. հղիության արհեստական ընդհատում

գ. ամուսնական անհավատարմություն:

Ընտանեկան այս խնդիրների առաջացման պատճառները կարելի է հիմնականում բաժանել երկու մասի՝ **սոցիալական** (ֆինանսական խնդիրներ, գործազրկություն, արտագնա աշխատանք, հասարակության շերտավորվածություն և այլն) և **հոգևոր-բարոյական** (հեռացում քրիստոնեական հոգևոր, ազգային-ավանդական արժեքներից, օտարամոլություն և այլն):

Բնական է, որ սոցիալական խնդիրների լուծումը հիմնականում դրված է պետության ուսերին: Սակայն ակնհայտ է, որ միայն սոցիալական հարցերի լուծմամբ ընտանեկան խնդիրները չեն կարգավորվում: Այս մասին է վկայում եւրոպական և արևմտյան բազմաթիվ զարգացած և հարուստ երկրների փորձը: Որքան էլ զարմանալի կարող է թվալ, բայց այս երկրներում ևս, հակառակ սոցիալական շատ խնդիրների լուծման, գոյություն ունեն և բավական մտահոգիչ սահմանների են հասնում ընտանեկան այն խնդիրները, որոնք առկա են ավելի աղքատ և անապահով երկրներում: Ինչպես ցանկացած մարդ ունի հոգևոր և մարմնավոր կարիք-

ներ, նույնպես և ամբողջ հասարակությունն է: Բավական չեն միայն սոցիալական խնդիրների լուծումն ու հասարակության ֆինանսական վիճակի բարելավումը: Անհրաժեշտ է նաև հավելյալ ջանք ու եռանդ ներդնել հասարակության հոգևոր դաստիարակչական գործը լավագույնս կազմակերպելու համար: Անշուշտ, հոգևոր դաստիարակությունը մարդն ամենից առաջ ստանում է իր ընտանիքում՝ մանկության ամենավաղ հասակից սկսած: Սակայն ոչ պակաս կարևոր է նաև նոր կազմավորվող ընտանիքների ճիշտ կառուցումը: Ահա այստեղ է, որ իր անելիքն ու կարևոր դերակատարությունը պիտի ունենա Եկեղեցին: Այս առումով առանձնացնենք մի քանի կարևոր քայլեր, որոնք կարող են նպաստել ընտանեկան ավանդական արժեքների վերականգնմանը.

ա. Անհրաժեշտ է ամուսնական բոլոր զույգերի հետ անցկացնել խորհրդատվական-խրատական հանդիպումներ՝ մինչև պսակադրությունը:

բ. Այդ հանդիպումներն առավել արդյունավետ դարձնելու համար պատրաստել նախաամուսնական խորհրդատվական գրականություն (գրքույկներ, բրոշյուրներ):

գ. Ընտանեկան հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել հանդիպում-սեմինարներ ավագ դպրոցի աշակերտների և համալսարանների ուսանողության հետ:

դ. Օգտագործել տեղեկատվական դաշտը:

Մեկ խոսքով՝ օգտագործել քարոզչական բոլոր հնարավորությունները և այդ ամենը կազմակերպել հստակ ծրագրով: Շատ կարևոր է, որ ողջ Եկեղեցին ներգրավված լինի քարոզչական այս գործընթացում,

այսինքն՝ եկեղեցականներից բացի, պետք է որ միաս-նաբար Եկեղեցու անդամներ ու եկեղեցական տարբեր միություններ ընտանեկան արժեքների քարոզչության և տարածման խնդիր դնեն իրենց առջև:

ԶԵԿՈՒՅՑ Բ

Աստղիկ Ստամբոլցյան
«Քրիստոնյա Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

«Տեր Աստված ասաց. *«Լավ չէ, որ մարդը միայնակ լինի։Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար»։*

Եվ Աստված թմրություն բերելով Ադամի վրա՝ հանեց նրա կողոսկրերից մեկը և ստեղծեց Եվային և բերեց նրա մոտ։Այսինքն՝ պսակեց նրանց։

Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից։ Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց»։ Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին»։ Աստված օրհնեց նրանց և ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք և լցրե՛ք երկիրը…»։

Այսպես՝ Ծննդոց գրքից տեղեկանում ենք, որ մարդուն ստեղծելուց հետո Աստված կատարեց տղամարդու և կնոջ թե՛ պսակի և թե՛ ամուսնության խորհուրդը՝ հիմք դնելով ընտանիք հասկացության հիմնական առաքելությանն ու մեծագույն արժեքին՝ զավակածնությանը։

Աստծո կողմից ընտանիք կառույցի կարևորումն ու արժևորումը մենք տեսնում ենք նաև Իր Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան պարագայում։ Աստծո

Որդին ծնվեց օրինական ընտանիքում, մեծացավ հոր և մոր սիրո ու ջերմության մեջ, ապրեց մի մթնոլորտում, ուր կար տղամարդու՝ որպես ընտանիքի գլխավորի նվիրում և հոգածություն և կնոջ՝ կատարյալ խոնարհություն և հնազանդություն։ Այսպիսով՝ Աստված կամեցավ, որ Իր մարդեղացած Որդին, մինչև լրումն Իր ժամանակի, ճաշակի հոր և մոր քաղցրությունը, ապրի տղամարդու և կնոջ՝ իրար հանդեպ ունեցած սիրո ու հավատարմության, միակամության ու զոհաբերումի ներդաշնակության մեջ։

Ընտանիքի աստվածադիր լինելու հերթական օրինակը մեզ է փոխանցում Հովհաննես ավետարանիչը, երբ նկարագրում է Կանայում տեղի ունեցող հարսանիքը, որին հրավիրված էին Տիրամայրը և Տեր Հիսուս Քրիստոսը՝ աշակերտների հետ։ Տիրոջ ոչ միայն ներկայությունը, այլև ջուրը գինու վերածելու հրաշքը աներկբայորեն խոսում է Քրիստոսի՝ նոր ձևավորվող ընտանիքն օրհնելու մասին։ Եվ Եկեղեցին, այն է՝ պսակադրող քահանան, հենց այս խորհրդապաշտական գինին է, որ հրամցնում է ամուսնացող զույգերին՝ վկայելով նաև այն մասին, որ Տերն ի պատասխան փարիսեցիների՝ «Օրինավո՞ր է, որ մարդ իր կնոջը արձակի» հարցին պատասխանեց. «Արդ, ինչ-որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»։

Քրիստոնյայի համար Տիրոջ խոսքը ոչ միայն հնչեցրած հարցի պատասխան էր, այլև պատգամ, պատվիրան։ Ուստի, այն ինչ ստեղծել, հիմնել և օրհնել է Աստված, մարդը պարտավոր է պահել ու պահպանել։ Եվ մեր Եկեղեցին էլ, որպես Տիրոջ մարմին, որպես հայ ժողովրդի քրիստոնեական հոգևոր արժեքների հավաքական կրողն ու փոխանցողը, դարեր շարունակ, ի

հեաճուկս բոլոր դժվարությունների, բոլոր մարտահրավերների, անխաթար կերպով, հաճախ նաև ի մահ կանգնյալ, կատարել է իր ստանձնած պարտավորությունները՝ Տիրոջ ու ազգի առջև, մանավանդ՝ ընտանիքի, ընտանեկան արժեքների պահպանման գործում՝ ընտանիքը մշտապես դիտելով որպես փոքր Եկեղեցի՝ ըստ Տիրոջ այն խոսքի, թե՝ «ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ»:

Այսօր նույնիսկ նրանք, ովքեր հաճախ անհարկի, երբեմն նաև տեղին քննադատում են Եկեղեցուն ու հոգևորականին, քաջ գիտեն, որ հենց մեր Եկեղեցին ու հոգևորականն են եղել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային, գիտական ու հասարակական, քաղաքական ու սոցիալական մտքի ու կյանքի կերտողը, պահպանողն ու փոխանցողը: Սա գաղտնիք չէ, և մանրամասնելու կարիք չունի: Սակայն այսօր քչերը գիտեն, թե ինչպիսին է եղել պատմական Հայաստանում քահանայի ինստիտուտը, որը, ցավոք, աղճատվեց Մեծ Եղեռնի, իսկ հետո նաև Հայաստանի խորհրդայնացման պատճառով: Եղեռնից մազապուրծ եղած մեր տատիկ-պապիկների պատմածներն իրենց ծխական քահանաների մասին այսօր միայն նախանձ կարող են շարժել: Քահանան ոչ միայն մկրտել, պսակել, թաղել է իր ծխի անդամներին, այլև կնքահոր ու պսակադրության քավորի հետ միասին, լուծել է ընտանիքներում ծագած բոլոր վեճերը, խրատներով, խորհուրդներով, հորդորներով հարթել բազում կնճռոտ հարցեր, նույնիսկ անտանելի սոցիալական պայմաններում նպաստել ընտանիքներում շատ զավակներ ունենալուն, ակտիվորեն մասնակցել երեխաների դաստիարակ-

չական գործին։ Այդ իսկ պատճառով մեր պապերի ընտանիքներն իսկապես նման են եղել Եկեղեցու, անգամ իրենց ինչ-որ տեղ նվիրապետական կառուցվածքով, տան անդամների իրավունքների ու պարտականությունների ճշգրիտ բաշխումով՝ ըստ սեռերի ու տարիքի։ Տղա երեխաներին մանկուց մեծացրել են որպես ընտանիքի ապագա նվիրյալ ամուսին ու հայր, իսկ աղջիկներին՝ հնազանդ կին ու սիրող մայր, ով հետո պիտի մեկ այլ ընտանիքի ծուխը շենացնի՝ նորը հնի շարունակությունը դիտելով, բայց ո՛չ հակադրվելով։

Ի դեպ՝ զգալի է եղել նաև երեցկնոջ դերակատարությունը։ Շատ հարցեր, որոնք հուզել են կանանց և ամաչել են այդ մասին խոսել քահանաների հետ, դիմել են երեցկնոջը, և երեցկինն էլ ոչ պակաս քան իր ամուսինը, օգնել ու աջակցել է, մանավանդ՝ ընտանեկան կյանքի փորձություններին դեռևս չընտելացած երիտասարդ կանանց ու հարսներին, իր խորհուրդներով մեղմել սկեսուր-հարս հարաբերություններում նկատվող խորթությունները և այլն։

Տատս ու պապս, որ մեկը մոկսեցի էր և մյուսը՝ խիզանցի, պատմում էին մի շատ ուսանելի սովորության մասին, որի կիրառումն այսօր անպայմանորեն շատ բան կփոխի ժողովրդի վերաբերմունքում՝ հանդեպ Եկեղեցի։ Ծխի բոլոր քիչ թե շատ ունևոր անդամներն իրենց բարիքներից զգալի բաժին էին հատկացնում քահանային։ Հարցիս, թե այդքան շատ բան ի՞նչ էր անում քահանան, պապս պատասխանեց. «Քահանան բաժանում էր ծխի աղքատ, տան կերակրողին կորցրած ընտանիքներին։ Եթե մենք տանեինք նրանց, գուցե ամաչեին, գուցե պարտքի

զգացումի լծից դրդված մերժեին, իսկ քահանայից վերցնում էին, որովհետև քահանայի տվածը ընկալվում էր որպես Աստծո տված, և նրանք իրենց շնորհակալությունը ոչ թե մեզ, այլ Աստծուն էին հայտնում»: Հոգևոր, բարոյական, ինչու չէ, նաև կրթական, տնտեսական ու սոցիալական փոխօգնության նման ինստիտուտ ունեցող Եկեղեցու շնորհիվ էր, որ մեր ազգը, նույնիսկ պետականության բացակայության պայմաններում, նույնիսկ օտարների լծի տակ, սոցիալական ու տնտեսական ծանր պայմաններում կարողացավ ոչ միայն գոյատևել և հասնել մինչև մեր ժամանակները, այլև վերստին ստեղծեց պետություն ու պետականություն:

Ցավոք, այսօր մեր Եկեղեցին դեռևս չի կարողանում լիարժեքորեն մտնել իր ծառայական կերպի մեջ, չի կարողանում վերագտնել այն դերակատարությունը ժողովրդի կյանքում, որ ունեցել է նախկինում: Պատճառները մեկը չեն, սակայն ամենամեծ պատճառներից մեկն այն էր, որ Խորհրդային Միության անաստվածային ու հակաեկեղեցական գաղափարախոսությունը դուրս մղեց Եկեղեցուն ժողովրդի կյանքից, ազգային ու հանրային կյանքի շատ արժեքներ նսեմացրեց ու ոչնչացրեց, մարդկանց կտրեց իրենց սրբազան ավանդույթներից ու սովորություններից, իրենց պապենական սուրբ «Հացից»՝ տեղը կեղծ ու սին արժեքներ ներմուծելով: Սա կարծես քիչ էր, հիմա էլ իբր քաղաքակրթված, ժողովրդավար դարձած եւրոպացի փարիսեցիներն են փորձում հեթանոսական հիշեցնող իրենց օրենքներն ու նորմերը փաթաթել մեր վզին՝ կանանց, երեխաների, գենդերային հավասարության իրավունքների անունների տակ, որոնց նպատակն առաջին

հերթին Ընտանիքի՝ սուրբ կառույցի քայքայումն է։ Մենք այդ ցավալի պարտադրանքներից մեկն արդեն ճաշակել ենք, երբ մեր տան դռները բացեցինք աղանդների առջև։ Կարծում եմ դեռ ուշ չէ, դեռ կարող ենք մարդու, կանանց, երեխաների և այլոց իրավունքներից առավել կարևորել, առավել արժևորել, գերակայել ազգի իրավունքը։ Մենք այնքան շատ չենք, որ թույլ տանք բզկտել մեզ։

Հաճախ կարելի է լսել, թե ընտանիքը պետության հիմքն է։ Դա այդպես է։ Բայց հենց այստեղ էլ ստացվում է պարադոքսալ մի վիճակ։ Այսօր մեր կենցաղային պայմանները, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, պետության կողմից ընդունված օրենքների արդյունքում ձևավորված հասարակական կյանքը, պետական կառույցներն՝ իրենց մտածողությամբ ու անարդյունավետ գործողություններով խեղում են կյանքի քրիստոնեական ընկալումները և առավելապես ընտանիքի դերը դրանցում։ Այդ խեղումն առաջին հերթին սկսվում է երեխաների դաստիարակությունից՝ սկսած մանկապարտեզից, դպրոցից, բուհից, ապա նաև աշխատանքային հարաբերություններից։ Ճիշտ է՝ այսօր դպրոցներում անցնում են Հայ Եկեղեցու պատմություն առարկան, ինչը խիստ խրախուսելի է, սակայն մենք գիտենք, որ այն նպատակ չունի Աստծուն ճանաչելու գիտելիքներ տալ երեխաներին. այն լավագույնս տալիս է միայն Եկեղեցու և Աստծո մասին գիտելիքներ, ծանոթացնում մեր տոներին ու ծեսերին՝ առանց լրջորեն խորանալու դրանց բուն էության մեջ։

Աստծո մասին գիտելիքները, ինչպես որևէ այլ գիտելիք, յուրացվում են միայն մտքով ու հիշողությամբ, ուստի վերոհիշյալ առարկան դպրոցներում սովորաբար

դառնում է վերացական, կրոնական ճշմարտություն-ների մակերեսային յուրացում՝ առանց ներթափանցելու հոգու խորքը։ Աստծուն ճանաչելն ու Աստծո մասին գիտելիք ունենալը տարբեր բաներ են։ Ուստի դպրոցը չի կարող վերականգնել մեր քրիստոնեական մտածո-ղությունը, բարոյական նորմերն ու ավանդույթները, մանավանդ՝ արդեն մի տեսակ դևալվացիայի ենթարկ-ված ընտանեկան արժեքները։ Երեխան կարող է Աստծուն ճանաչել միայն ընտանիքում՝ քրիստոնյա ծնողների դաստիարակությամբ, Եկեղեցում՝ պատա-րագներին ու ժամերգություններին մասնակցելով, համայնքի քահանայի ակտիվ աշխատանքով՝ թե՛ ծնողների և թե՛ երեխաների հետ։ Ցավոք, այս միջոցն էլ է կիսատ-պռատ։ Չափազանցություն թող չթվա ասածս՝ պատարագներին հազվադեպ կարող ենք հանդիպել ծիսակատար քահանայի կնոջն ու զավակներին, ընտանիքի անդամներին։ Այս դեպքում հարց է ծագում՝ ինչ՞ իրավունքով պիտի ծխի, համայնքի քահանան հորդորի ծնողներին՝ եկեղեցի գնալ երեխաների ձեռքը բռնած։

Ասում ենք՝ ընտանիքը պետության հիմքն է, և իսկապես դա այդպես է, սակայն, ցավոք, մերօրյա շատ օրենքներ ու օրենսդրական ակտեր իսկապես ուղղված են ոչ թե ընտանիքների պահպանությանն ու զարգաց-մանը, այլ՝ քայքայմանը։ Ազգի կենսական, խթանիչ ուժն ի վերջո սկսվում է ընտանիքից, ընտանիքում ձևավոր-ված անհատից։ Ընտանիքն է անհատի ազատության, անհատի արժանապատվության, ստեղծագործական մտքի ու գործունեության հիմնական միջնաբերդը, քանզի հանրությունն մշտապես և առավելապես վարակվում է իր առաջադեմ, հոգևոր ու բարոյական

արժեքներ կրող անհատի գաղափարներով, ձգտում գնալ նրա ճանապարհով, նրա օրինակով տեր դառնում իր սրբություններին, նախնյաց ժառանգությանը, հայրենիքին։ Իսկ աղճատված, ազգային բարոյահոգեբանական նորմերից հեռու ընտանիքում հազիվ թե ծնվի ազգի ցանկալի Զավակը։ Ամենևին պատահական չէ, որ օրըստօրե գլոբալիզացիայի ենթարկվող աշխարհում հանրության արմատական վերափոխումի զենքը հենց առաջին հերթին ուղղված է ընտանիքի դեմ, ուղղված է նրա ավանդական, այն է՝ Եկեղեցու փոքր մոդել հանդիսացող կառույցի փոփոխմանն ու այն հիմնովին ջարդելուն։

Երբ Եկեղեցին հանվեց մեր կյանքից, ավերվեցին մեր փոքր Եկեղեցու՝ ընտանքի հիմնայունները։ Շատացան ոչ օրինական, այլ կերպ ասած՝ քաղաքացիական ամուսնությունները, երբ զույգերից ոչ մեկն ըստ էության պատասխանատվություն չի կրում մյուսի հանդեպ, ազգային աղետի վերածվեցին ամուսնալուծությունները, որոնք կամա թե ակամա վնաս են հասցնումոչ միայն զույգերի հոգեկան աշխարհին ու հոգեբանությանը, այլև մեծապես վտանգում երեխաների՝ դեռևս ոչ լիարժեքորեն ձևավորված աշխարհը։ Նրանց մանկական զգայուն հոգիները դժվարանում են ըմբռնել ծնողների արարքը։ Հոր և մոր սիրով լեցուն, հոգատար ու հարգալից մթնոլորտի փոխարեն նրանք ասես ընկնում են լքված, չսիրված, ցանկալի չլինելու տառապանքների մեջ, ինչը հետագայում նրանց մեծ մասին դարձնում է ինքնամփոփ, եսակենտրոն, հաճախ նույնիսկ՝ մարդատյաց ու հանցագործ։ Նման երեխաների հետ, երբ փորձում ես խոսել Աստծո մասին, հասկանում ես, որ ոչ միայն չեն ընդունում Աստծուն,

այլ իրենց չարիքի բուն պատճառը երբեմն համարում են հենց Աստծուն։

Քրիստոնեական արժեքներից հեռացումը բերեց մեզ նաև նրան, որ 20-րդ դարում արդեն մենք՝ մայրերս դարձանք որդեսպաններ. աբորտը շռնդալից կերպով մուտք գործեց մեր կյանք, իսկ այսօր նաև սեռազտիչ աբորտների պատճառով կանգնած ենք վաղը հայ մայրերից զրկվելու վտանգի առջև։ Գաղտնիք չէ, որ հիմնականում մայրն է խոսում երեխայի հետ, մայրն է դաստիարակում երեխային և մեծապես մորից է կախված, թե երեխան հետագայում որ ազգին է պատկանելու։

Կարծում եմ այստեղ՝ առավել քան Եկեղեցին անելիք ունի։ Պետք է հասնել նրան, որ եթե ոչ աբորտները, ապա գոնե սեռաճանաչման նախնական ստուգումները պետականորեն արգելվեն, այլապես կարճ ժամանակ անց մենք ազգովի կկանգնենք ժողովրդագրական լուրջ խնդիրների առաջ և այլևս ոչ մի օրենք ու ռեֆորմ մեզ չի փրկի։

Իսկ ինչ վերաբերում է կանանց, երեխաների իրավունքների պաշտպանությանը, ապա դժվար գտնվի մի ազգ, որի ավանդական, քրիստոնեական արժեքների վրա հիմնված ընտանիքում զավակի հանդեպ լինի այնքան սիրո ու նվիրումի, զոհաբերումի ու զոհողությունների պատրաստակամություն, որքան առկա է եղել և այսօր էլ դեռևս կա հայ ընտանիքներում։ Իսկ եթե այսօր կան երեխաներ, որոնք զրկված են իրենց իրավունքներից, ապա պատճառը ոչ թե ազգային է, այլ միմիայն սոցիալական։

Դառնանք հայ կնոջը։ Կինը, մանավանդ քրիստոնեական մշակույթում ծնված ու սնված կինը, ով տղա-

մարդու հետ հավասար ծնվել է նույն մկրտության ավազանից, ընդունել նույն դրոշմը, իրավունքների առումով արդեն իսկ հավասար է տղամարդուն։ Խնդիրը միայն պարտականությունների մեջ է, ինչը բխում է լոկ ֆիզիոլոգիական տարբերությունից։ Քրիստոնյա Հայաստանում կինը երբեք ստորադասված չի եղել տղամարդուն։ Հայ կինը դարեր շարունակ, մինչև իսկ խորհրդայնացման առաջին տասնամյակները, եղել է ընտանիքի օջախը վառ պահող այն կրակը, որին սիրել, հարգել ու փայփայել են թե՛ ամուսինը և թե՛ զավակները։ Հայ կինը տիրամոր պատկերն է եղել ընտանիքում։ Մեզանից, ովքեր բախտ են ունեցել տեսնելու իրենց տատիկներին, վայելելու նրանց մատուցած ճաշն ու քաղցրավենիքը, լսել նրանց խրատները, հեքիաթներն ու կյանքից վերցրած ուսանելի պատմությունները, կփաստեն, թե ինչ հարգանք ու ակնածանք ունեին տան մնացյալ անդամները տատիկի նկատմամբ։ Ուստի լավ կլինի այսօր դրսից ներմուծված գաղափարներով սնվող հասարակական կազմակերպությունները, օտար տերությունների ճնշման տակ գտնվող մեր օրենսդիրները ավելի շատ փորձեն բարձրացնել ու ամրագրել մեր իսկ ազգային ընտանեկան ավանդույթները՝ շաղախված քրիստոնեական ու ազգային բարոյական մե՛ր չափորոշիչներով, դարերով անցած ու դարերի մեջ թրծված մեր ինքնության կնիքով։ Իսկ Հայ Եկեղեցին, Թեքեյան բանաստեղծի խոսքերով ասած՝ «Հայ Հոգիին ու Մարմնույն Զրահանդերձը փայլուն», այսօր, թող ներվի ասել, կարծես փոքր-ինչ շփոթահար վիճակում է, կարծես դեռևս չգիտի՝ որտեղից պիտի սկսի։ Փոքր բան է ասածս, բայց գուցե սկսենք նրանից, որ հոգևորականը սովորի մշտապես և ամե-

նուր՝ փողոցում, խանութում, թատրոնում, մի խոսքով՝ մշտապես կրել իր սքեմը, կապան։ Այսօր տպավորություն է ստեղծվում, որ սքեմը աշխատանքային համազգեստ է, և երբ եկեղեցում չես՝ այն ավելորդ է։ Կամ սկսենք մեզանից՝ Եկեղեցում ծառայող-աշխատողներից։

Ես հավատում եմ, որ մեր Եկեղեցին միանգամայն ի զորու է լիարժեքորեն վերագտնելու իրեն, կարող է և պետք է անընկբայորեն կանգնի իր հոտի պաշտպանության դիրքերում, և ինչպես բարի հովիվ, գնա ու փնտրի իր կորած նույնիսկ մեկ հատիկ ոչխարին։ Չէ որ մեկ ոչխարը կարող է բազում գառների մայր լինել։ Մենք նրան կորցնելու իրավունք չունենք։ Մենք մեր պապերի հողը, մեր սրբությունների ու հիշատակների Սրբոցը դատարկելու իրավունք չունենք։ Եթե ոչ մեր սերունդները, ապա պատմությունը մեզ չի ների։

ԱՄՓՈՓՈՒՄ

-Ընտանիքն աստվածահաստատ կառույց է:

-Ընտանիքի հիմք հանդիսացող ամուսնական կապը թույլատրելի է բացառապես տղամարդու և կնոջ միությունով:

-Ընտանիքի ներսում տղամարդն ու կինը իրավահավասար են և փոխադարձաբար լրացնում են միմյանց:

-Քրիստոնեական ընտանիքի կարևորագույն հիմնարժեքներից և գործառույթներից մեկը որդեծնությունն է:

Արդի հասարակության ընտանեկան հիմնական խնդիրներից են՝

- ամուսնալուծությունների թվի մեծ աճը
- ընտանիքներում երեխաների թվի նվազումը
- արտամուսնական երեխաների թվի աճը
- հղիության արհեստական ընդհատումը
- ամուսնական անհավատարմությունը և այլն:

Հիշյալ խնդիրների առաջացման պատճառները հիմնականում բաժանվում են երկու խմբի՝

1. սոցիալական
2. հոգևոր-բարոյական:

Միաժամանակ գլոբալիզացիայի ենթարկվող արդի աշխարհում ընտանիքների քայքայման գլխավոր պատճառներից է օտար, ոչ ավանդական արժեքների ներմուծումը: Իսկ քրիստոնեական արժեքներից հեռացումը հանգեցրել է մի շարք բացասական հետևանքների: Պատմական Հայաստանում մեծ է եղել Եկեղեցու

դերակատարությունը հասարակական կյանքում: Քահանան մասնակցություն է ունեցել ինչպես ներընտանեկան, այնպես էլ համայնական կյանքում կենսական կարևոր խնդիրների լուծմանը: Այսօր, սակայն, Խորհրդային Միության աստվածմերժության տարիներից հետո, Եկեղեցին դեռևս լիարժեքորեն չի վերագտել նախկին դերակատարությունը ժողովրդի կյանքում:

Ընտանիքին սպառնացող վտանգների դեմ պայքարում անհրաժեշտ է.

- օրենսդիրների, հ/կ-ների կողմից ազգային ընտանեկան ավանդույթների ամրագրում
- ընտանեկան ավանդական արժեքների վերականգնման, երեխայի դաստիարակության գործում Եկեղեցու դերակատարության բարձրացում:

Այս ամենին կարող են նպաստել.

ա. մինչև պսակադրությունը ամուսնական զույգերի հետ հոգևորականի խորհրդատվական-խրատական հանդիպումները

բ. նախաամուսնական խորհրդատվական գրականության (գրքույկներ, բրոշյուրներ) տարածումը

գ. ընտանեկան հիմնախնդիրների վերաբերյալ երիտասարդների հետ հանդիպում-սեմինարների կազմակերպումը

դ. մեդիա դաշտի, քարոզչական տարբեր միջոցների օգտագործումն երիտասարդության լավագույնս իրազեկելու ամուսնական-ընտանեկան կյանքի, պատասխանատվության ու պարտավորությունների մասին:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եկեղեցի և ընտանեկան արժեքներ

(քննարկման նյութեր)

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավագ Սարգսյան

Մարիամ Ավետիսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՒ ԱՌԱՔ
ARMENIA ROUND TABLE
oikoumene
actalliance